

դոր կը ներկայացնէին երկու մասմետական բռնակալութիւնները: Պարսկաստան եւ Թուրքիա, որոնց դէմ է որ պիտի ապստամբէին տեղական անպատրաստ զբիստոնեաները՝ պարզապէս ինքնակորոյս ըլլալով իրենց իսկ անինայ թափուելիք արեան մէջ:

Եւրոպա իր կրօնապետութիւններով կամ աշխարհական իշխանութիւններով միշտ իւզ թափեց, արծարծեց, հրահրեց արեւելեան զբիստոնէութեան ազատատենչութիւնը: Զանոնք քաջալերեց ապստամբութեանց կամ թշնամութեանց՝ ընդդէմ իրենց տիրող եւ նոյն ատեն բնակակից, վայրագ մասմետականութեան: Եւրոպան, օրինակ, Հայոց եւ Վրացոց կը թելադրէր ազատութիւն մը, որ ինքն իսկ կը զլանար իրեն ենթակայ ժողովուրդներուն՝ Սկովտիացիներուն, Սպանիոյ հպատակ Հոլանտացիներուն, վայրագ կերպով ջարդուած Հիւլընոններուն եւն. եւն.:

Այսպէս, ԺՁ դարուն խմորուող Հայկական ազատամարտին կուգար յետին նպատակներով խառնուելու նաեւ Անգլիան, քանի մը հակ մետաքսի համար անխղճօրէն նոյնիսկ Արեւելքի զբիստոնէութիւնը անձիտման եւ արեան ծովերու մէջ տապալակելու առաջնորդելու մտադրութեամբ:

Անգլիացի նախակարապետը, Էնթոնի ձէքինսըն, երբ Կովկաս եկաւ, արդէն որոշ մըշակուած ծրագիր մը ունէր հում մետաքսի առեւտուրին տիրանալու համար: Նախանձոտ եւ յամառ ցեղի այդ դաւակը ինքն իսկ իր 1562-ին դրած նամակին մէջ շատ պերճախօսօրէն կը վկայէ իր եւ իր կառավարութեան այսպանելի մտադրութեանց եւ գործածած միջոցներուն մասին: Իր այդ նամակին մէջ կը նկարագրէ Շիրվանի վրայ իշխող Ապտուլահ Սանի հետ իր մէկ խօսակցութիւնը:

Սանը կ'ուզէ իմանալ թէ Անգլիացոց եւ Թուրքերու միջեւ ի՞նչ տեսակ յարաբերութիւն գոյութիւն ունի: ձէքինսըն, առանց տատամսելու, կը պատասխանէ.

«Մենք անոնց հետ երբեք բարեկամութիւն չունինք, որով անոնք (թուրքերը) մեզի թոյլ չեն տար երթալու Սօֆիին (Պարսից Շահին) երկրին սահմանները: Վենետիկցի կոչուած

ազգ մը կայ, մեզմէ շատ հեռու, որ սերտ զինակից է թուրքին հետ: Ատոնք թուրքին սահմաններուն մէջ մեր ապրանքներով առեւտուր կ'ընեն, գլխաւորաբար հում մետաքսի հետ փոխանակելով: Եթէ Սօֆին հաճի արտօնել մեր ապրանքներուն վաճառումը իր երկրին մէջ, եւ մեզի անցագիր եւ ապահովութիւն տայ, ինչպէս որ թուրքը տուած է Վենետիկցիներուն, եւ կ'ասկած չունիմ, որ առեւտուրը այնքան պիտի բարգաւաճի ի նպատակ պարսից, որուն նման նախապէս չէ եղած երբեք»:

Պատմութեան ծանօթի մը համար անկարելի է ասկէ աւելի խեղաթիւրեալ պատասխան մը տալ: Անգլիացիներ կամ ուրիշ Եւրոպացիներ չէին արգիլուեր Թուրքիայէն անցնիլ: Սակայն, երկրին վատ վարչութիւնը, տեղական իշխանութեանց աւարատենչութիւնը արգելք կ'ըլլային Եւրոպացի առեւտրականներու ասկէ անցնելուն: Այսուհանդերձ ձէքինսընէ գրեթէ քսան տարի վերջ Անգլիացի ձան Նիւպէրի վաճառականը Թուրքիոյ մէջէն անցաւ:

Վենետիկցիք թուրքերուն բարեկամ չէին: Մալթայի թրքական ապարդիւն պաշարումը 1565, մանաւանդ 1570-ին, Վենետիկցոց պատկանող Կիպրոսի վրայ Թրքական արշաւանքը կրնան ցոյց տալ, որ «Վենետիկցի կոչուած ազգը» երբեք «սերտ զինակից» չէր Թուրքերուն, այլ յարատեւ թշնամին էր անոնց: Մինչ անդին՝ նոյնիսկ Էնթոնի ձէքինսըն գտնուած էր Թուրքիա, անոնցմէ ստացած էր արտօնութիւններ, Սուլթան Սիւլէյման ինքն իսկ իրեն տուած էր Թուրքիոյ մէջ ազատ առեւտուր ընելու եւ ճամբորդելու հրամանը 1553-ին:

1535-էն սկսեալ, երբ Ֆրանսայի Ֆրանսիս Ա.ին Թուրքիոյ հետ համաձայնութիւն կնքեց, համաձայնագրին մէջ Անգլիացոց համար «բարեխօսութիւն» մը կար, որով ապագային առիթ կը տրուէր Անգլիացոց Թուրքիոյ հետ մերձենալու: Հարպօն եւ Բլէմէնթ Անգլիացի վաճառականները նոյնիսկ Ֆրանսացոց՝ իրենց նախկին պաշտպաններուն դէմ կը համաձայնէին Թուրքերուն հետ 1580-էն քիչ առաջ: Նոյն ատեն Անգլիոյ «ամենազբիստոնեայ թագուհին» Էլիզապէթ, որ «հաւատքի պաշտպանի» պիտակն ալ կը պահէր, Թրքոց